

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵԴԵԿԱԳԻՐ

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

Журнал издается с 5.01.1948 г.

Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (գլխավոր խմբագիր), Հ.Ա. ԹԵՐԶՅԱՆ (գլխ. խմբ. տեղակալ), Զ.Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ս.Գ. ԱԴԲԱԼՅԱՆ, Ռ.Վ. ԱՌՈՅԱՆ, Վ.Վ. ԲՈՒՆԻԱՏՅԱՆ, Ժ.Դ. ԴԱՎԻԴՅԱՆ, Ս.Պ. ԴԱՎԹՅԱՆ, Ս.Մ. ԴԱԶԱՐՅԱՆ, Ո.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Ս.Հ. ՄԻՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ, Վ.Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Р.М. МАРТИРОСЯН (главный редактор), А.А. ТЕРЗЯН (зам. глав. редактора),
З.К. СТЕПАНИЯН (ответственный секретарь), С.Г. АГБАЛЯН,
Р.В. АТОЯН, В.В. БУНИАТЯН, Ж.Д. ДАВИДЯН, С.П. ДАВТЯН, С.М. КАЗАРЯН,
В.З. МАРУХЯН, Ю.Л. САРКИСЯН, В.С. САРКИСЯН,
С.О. СИМОНЯН, М.Г. СТАКЯН, В.С. ХАЧАТРЯН

EDITORIAL BOARD

R.M. MARTIROSSYAN (Editor-in-Chief), H.A. TERZIAN (Vice-Editor-in-Chief),
Z.K. STEPANYAN (Secretary - in - Chief), S.G. AGHBALYAN,
R.V. ATOYAN, V.V. BUNIATYAN, Zh.D. DAVIDYAN, S.P. DAVTYAN,
S.M. GHAZARYAN, V.Z. MARUKHYAN, YU.L. SARGSYAN, V.S. SARKISSYAN,
S.H. SIMONYAN, M.G. STAKYAN, V.S. KHACHATRYAN

Հրատ. խմբագիր՝

ԺԱՆՆԱ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Համակարգչային շարվածքը
և ձևավորումը

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Խմբագիրներ՝

ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՆԵԼԼԻ ԱՆԱՆՅԱՆ

© Издательство ГИУА

Известия НАН и ГИУ Армении (сер. техн. наук), 2010

Ա.Կ. ՊՈՂՈՍՅԱՆ, Վ.Վ. ՍԱՐՈՑԱՆ, Զ.Ռ. ԲՈՆԻԱԹՅԱՆ

ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ՅՈՒՂՄԱՄԲ ՇՓՄԱՆ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ուսումնասիրվել է քսուքայուղային նյութերում տարբեր բաղադրակազմի հավելանյութերի պարունակությունից կախված շփագիտական բնութագրերի փոփոխությունը: Ճշգրտվել է քսուքայուղերի հակաքերժվածքային հատկությունները բնութագրող պայմանական բեռնվածքի և մաշման ուժգնության գործակցի միջև հաստատված կոռելյացիան, ինչը հնարավորություն է տալիս փոքրաքանակ փորձերի միջոցով կանխատեսել քսուքայուղային նյութերի հակամաշվածքային հատկությունները:

Առանցքային բառեր. շփագիտություն, սահմանային յուղում, հավելանյութ, քսուքայուղ, մակակլանում, կերամաշում:

Սահմանային յուղումը վերաբերում է շփման այն պրոցեսին, որտեղ, ելնելով բեռնվածության ու արագության արժեքներից, շփվող մակերևույթների անջատման համար հիդրոդինամիկ կամ էլաստահիդրոդինամիկ հեղուկային յուղման շերտի կարիք չկա [1]: Յուղվող շատ համակարգերում, որոնք նախատեսված են առատ յուղման պայմաններում աշխատելու նպատակով, իրականում շփումը տեղի է ունենում սահմանային յուղման պայմաններում: Դրա պատճառով, երբ շփման պայմանները վատանում են, սահմանային յուղման հատկություններն են, որ կանխում են շփագույզի շարքից դուրս գալը:

Բոլոր յուղման ռեժիմներից սահմանայինն ամենաքիչ հասկանալին է [1, 2]: Դրա համար կան առնվազն երեք պատճառներ՝ սահմանային յուղումն ընդգրկում է մակերևութային շատ բարակ շերտեր, որոնց ուսումնասիրումն ու չափումը չափազանց դժվար են: Սահմանային յուղումը մեծապես կախված է այնպիսի գործոններից (մետաղական մակերևույթներից, յուղերի ու քսուքների բնույթից, խոնավությունից, օքսիդացման հավանականությունից և այլն), որոնք դժվար են հսկվում: Սահմանային յուղումն ընդգրկում է տարբեր մեխանիզմների միաժամանակյա ազդեցությունը: Այդ պատճառով սահմանային յուղման ընդհանուր տեսական մոդել դեռևս գոյություն չունի, ուստի լայն տեղ է հատկացվում փորձնական արդյունքներին:

ISO4378/3 միջազգային ստանդարտի համաձայն՝ սահմանային յուղման բնութագիրն արտահայտվում է ոչ թե քսուքայուղային նյութի ծավալային մածուցիկության հատկանիշներով, այլ շփամակերևույթների և քսուքայուղային նյութերի փոխազդեցության ընթացքում ֆիզիկական մակակլանման (ադսորբցիայի) կամ քիմիական ռեակցիայի արդյունքում առաջացող սահմանային շերտերի հատկություններով: Սահմանային շերտերի դերը կայանում է շփման մակերևույթների բաժանման, մետաղական անմիջական հպման և կերամաշման առաջացման հնարավորության կանխման մեջ: Գործնականում ժամանակակից մեքենաների և մեխանիզմների հեղուկ կամ պլաստիկ քսուքանյութերով յուղված և ծանրաբեռնավորված շփահանգույցները որոշակի պահերի (գործարկման և շարժականգառի, բարձր հպակային բեռնվածքների կամ ջերմաստիճանների, շփվող մեքենամասերի հարաբերական տեղաշարժի ցածր արագությունների

դեպքում) աշխատում են սահմանային յուղման ռեժիմներում: Սահմանային յուղման շփման պայմաններում յուղման միջավայրի և պինդ մարմինների մակերևութային միջև փոխազդեցության առաջին փուլը ֆիզիկական մակակլանումն է:

Բարձր (ավելի քան 6 ՄՊա) հպումային ճնշման դեպքում քսուքայուղային նյութի մակակլանված մոլեկուլները կարող են արտաձգվել հպման տեղամասից, որի հետևանքով բազմամոլեկուլային շերտը դառնում է ավելի բարակ: Արդյունքում մետաղի մակերևույթը մերկանում է՝ անմիջական հպման տեղերում առաջացնելով այսպես կոչված եռակցման կամրջակներ: Դրանց քայքայման արդյունքում առանձնանում են մաշման արգասիքներ (մասնիկներ): Եթե ադիեզիոն կապերի արժեքը գերազանցում է կրիտիկականին, առաջանում է քերծվածք, այնուհետև՝ մակերևութային կերամաշում: Ֆ. Բոուլենի մոդելի [3] համաձայն՝ հպումն իրականացվում է անհարթությունների մերկացված գագաթներով, ինչը մեծ ազդեցություն ունի շփման գործակցի արժեքի վրա.

$$f = \gamma f_m + (1 + \gamma) f_c, \quad (1)$$

որտեղ f - ը շփման գործակիցն է սահմանային յուղման ժամանակ, γ - ն շփահանգույցի մետաղական հպման մասն է, f_m - ը և f_c - ն շփման գործակիցներ են, համապատասխանաբար, մաքուր մետաղական և չվնասված սահմանային շերտի միջոցով հպման դեպքերում:

Սակակլանված շերտով տեղայնացված մետաղական հպման տեղամասերում, առանձին միկրոանհարթությունների գագաթներով ընթանում է չափավոր ադիեզիոն մաշում, ինչն արտահայտվում է շփագույգերի միկրո- և մակրոերկրաչափության փոփոխությամբ [2]: Այդ դեպքում առաջին մոտեցմամբ

$$I_V = \gamma I_m + (1 - \gamma) I_c, \quad (2)$$

որտեղ I_V - ն սահմանային յուղմամբ շփման ծավալային մաշումն է, I_m - ը՝ մետաղական հպակի տեղամասում ադիեզիոն մաշումը, I_c - ն՝ քսուքայնության շերտի տակ մաշումը:

Քանի որ մակակլանված շերտով յուղման պայմաններում I_c - ի մեծությունը կարելի է անտեսել, ապա, համաձայն Ռոուլի [2]՝

$$I_V \approx \gamma I_m: \quad (3)$$

Որքան մեծ է մետաղական հպման մասը, այնքան մեծ են շփման կորուստները և մաշումը:


Շփման ծանր ռեժիմների պայմաններում (օրինակ՝ ատամնավոր կառչման) կերամաշումից ու շփման հանգույցի խափանումից խուսափելու նպատակով յուղերի մեջ ավելացնում են քիմիապես ակտիվ հավելանյութեր (присадки), սովորաբար, ծծմբի, քլորի կամ ֆոսֆորի միացությունների տեսքով [1]: Շփական հպակում զարգացող բարձրաջերմաստիճանային պայմաններում հավելանյութերի շնորհիվ շփման մակերևութների վրա առաջանում են քիմիական միացություններ, որոնք տեղաշարժի փոքր դիմադրության պատճառով զգալիորեն նվազեցնում են շփումն ու ադիեզիոն մաշումը: Ընդունված է համարել, որ մինչ մետաղական մակերևութի հետ քիմիական ռեակցիան տեղի է ունենում հավելանյութերի տրոհում շփումից առաջացած բարձրաջերմաստիճանային պայմաններում: Ուստի ակնհայտ է, որ հավելանյութերի տրոհման և դրա հետևանքով առաջացած քիմիական ռեակցիայի ջերմաստիճանների միջև որոշակի կապ գոյություն ունի [4]:

Քիմիական ռեակցիայի ուժգնությունն արտահայտվում է ցուցչային հավասարումով.

$$q_p = A \exp(k / R\theta), \quad (4)$$

որտեղ A - ն և k - ն հաստատուններ են, R - ը՝ գազային հաստատունը, θ - ն՝ ջերմաստիճանը:


Մակերևութային նորմալ աշխատանքային ջերմաստիճանները պետք է լինեն նկ.1-ում նշված θ_1 - ից և θ_2 - ից ցածր [1]:



Նկ.1. Քիմիական ռեակցիայի ուժգնության կախումը մակերևութային ջերմաստիճանից տարբեր P_1 և P_2 ճնշումների դեպքում

Սահմանային յուղման ունակության գնահատման Ռ.Մ. Մատվենսկու ջերմաստիճանային մեթոդը [4] հնարավորություն է ընձեռում հետևելու շփման f գործակցի փոփոխմանը՝ θ ջերմաստիճանի աճից կախված: Որպես սահմանային յուղման շերտերի ջերմունակության գնահատման չափանիշներ ընդունված են՝

1. Կրիտիկական $\theta_{կր}$ ջերմաստիճանը, որի դեպքում տեղի է ունենում շփման f գործակցի կտրուկ աճ: Այն ուղեկցվում է անհավասարաչափ շարժմամբ ու մաշվածքի աճով: $\theta_{կր}$ - ը բնութագրում է սահմանային յուղման շերտի քայքայումն ու մետաղական հպման առաջացումը (նկ.2, կոր 1):



Նկ.2. Սահմանային յուղման շփման f գործակցի բնորոշ կախումները ջերմաստիճանից.

1(հանքային յուղ (վազելինային) մակերևութաակտիվ հավելանյութով (0,1% ստեարինային թթու), 2(հանքային յուղ քիմիապես ակտիվ (1,5% քլորպարաֆին) հավելանյութով [4]

2. Շփման մակերևույթների քիմիական բարեփոխման (ք ջերմաստիճանը, որի դեպքում յուղի մեջ ավելացված քիմիապես ակտիվ հավելանյութի տրոհման և դրա արդյունքների ու մետաղի քիմիական ռեակցիայի հետևանքով շփման մակերևույթի վրա առաջանում են ցածր տեղաշարժի դիմադրությամբ շերտեր, որոնք կատարում են յուղման նյութի ֆունկցիա: Դրա ձևական հատկանիշները շփման գործակցի փոքրացումն ու ցատկաձև շարժման դադարումն են (նկ.2, կոր 2):

Կրիտիկական ջերմաստիճանի դեպքում տեղի է ունենում յուղի մոլեկուլների ֆիզիկական ապակոդմնորոշում սահմանային շերտում, դրանց դետորբում և, որպես հետևանք, շերտը կորցնում է շփման մակերևույթները միմյանցից անջատելու հատկությունը: Դա, ընդհանուր առմամբ, վերականգնվող պրոցես է, որը ենթարկվում է ջերմադինամիկայի օրենքներին և կախված է մակակլանման ջերմաստիճանից: Երբ ջերմաստիճանը շփման մակերևույթի վրա հասնում է քիմիական բարեփոխման (ք ջերմաստիճանին, առաջանում են պինդ յուղերի նման շերտեր: Դրանց գոյացումը կապված է քիմիական ռեակցիաների շնորհիվ տեղի ունեցող անվերականգնելի պրոցեսների հետ:


Մակերևութաակտիվ նյութեր (հավելանյութեր) պարունակող քսուքայուղերով շփահանգույցների շահագործման պայմաններում դրանց պարունակության աճի հետ մեկտեղ շփման գործակիցը սովորաբար նվազում է մինչև որոշակի արժեք, այնուհետև, հավելանյութի պարունակության հետագա աճի պարագայում, գործնականում չի փոփոխվում: Շփման մակերևույթների վրա մակակլանված շերտի (թաղանթի) մոլեկուլները հիմնային յուղի հետ գտնվում են դինամիկ հավասարակշռության մեջ, և հավելանյութի պարունակության հետագա աճն այդ շերտում նպաստում է մետաղական մակերևույթների անմիջական հպման մակերեսի նվազմանը [2]:

Բ. Վ. Դերյագինի [5] համաձայն՝ հավելանյութերի փոքր բաղադրաչափերի դեպքում մակակլանվող մոլեկուլները շփման մակերևույթների վրա տեղակայված են հորիզոնական դասավորվածությամբ (նկ.3), ինչը համապատասխանում է այդ մոլեկուլների և պինդ մարմնի փոխադարձ ձգման նվազագույն էներգիայի արժեքին: Մակակլանված շերտում հավելանյութի պարունակության աճի հետ մետաղական հպման չափամասը նվազում է և, համապատասխանաբար, փոքրանում է շփման f գործակիցը: Մետաղական մակերևույթի վրա մակակլանվող մոլեկուլների թվի աճի հետ մոլեկուլները կամ դրանց խմբերը սկսում են աստիճանաբար ուղղաձիգ դիրք գրավել: Պինդ մարմնի մակերևույթի հետ փոխազդեցության մեջ են մտնում ավելի մեծ թվով ակտիվ մոլեկուլների խմբեր, համեմատած մակերևույթից պոկված ոչ բևեռային մոլեկուլների փոքր քանակության հետ: Մակերևույթի վրա ինչպես ուղղաձիգ (կամ թեք), այնպես էլ հորիզոնական կողմնորոշմամբ մոլեկուլների առկայությունը բերում է շփամակերևույթների ինքնատիպ «մոլեկուլային խորդուբորդության» առաջացմանը (նկ.3), ինչի պատճառով շփման գործակցի արժեքն աճում է:

Հիմնային յուղում հավելանյութի պարունակության հետագա աճի հետ ուղղաձիգ կողմնորոշումը տարածվում է ավելի մեծ քանակով մակակլանված մոլեկուլների վրա (նկ.3), հպակի մակերևույթը հարթվում է, և շփման գործակցի արժեքը կրկին նվազում է: Երբ վերջապես ձևավորվում է ուղղաձիգ կողմնորոշմամբ հավելանյութի մոլեկուլների կիպ դասավորված շերտը՝ շփման մակերևույթներն անջատվում են միմյանցից ադիզվող փոխազդեցությունը թուլացնող բավարար չափով:

Սակայն, հավելանյութերի բաղադրակազմից կախված, հնարավոր են քիմիական տարբեր ռեակցիաներ հավելանյութի ակտիվ տարրերի և մետաղական

շփամակերևույթի միջև, որոնք կարող են անդրադառնալ շփման ուժի (գործակցի) փոփոխության օրինաչափության վրա: Իրոք, փորձարարական հետազոտությունները ցույց են տալիս, որ շփման մակերևույթի վրա մակակլանված շերտի առանձնահատկության պատճառով շփման f գործակցի փոփոխման դինամիկան տարաբնույթ է [6]: Այսպես, նկ. 4-ի ա, բ և գ գրաֆիկներում արդյունաբերական Ի-40Ա յուղի հիմքով և դիքլորբութեն (ԴՔԲ), դիքլորէթան (ԴՔԷ) ու դիքլոր-կապրիլետ (ԴՔԿ) հավելանյութի խտության ավելացման դեպքում շփման գործակիցը սկզբից կտրուկ իջնում է, այնուհետև մի փոքր կայունանում, իսկ հետո միալար նվազում՝ դրանով հանդերձ լիովին համապատասխանելով վերը նշված օրինաչափությանը (նկ.3):




Նկ. 3. Մակերևութաակտիվ մոլեկուլների բաշխվածության բնույթից կախված շփման f գործակցի փոփոխությունը

Շփման գործակցի նվազման պատճառ կարող է հանդիսանալ նաև ակտիվ ատոմների (օրինակ՝ քլորի) փոխազդեցությունը յուվենիլային մակերևույթների հետ՝ առաջացնելով պաշտպանիչ շերտեր (մետաղի քլորիդ), որոնք մետաղի հետ համեմատած ունեն տեղաշարժի նկատմամբ փոքր դիմադրություն և հեշտորեն քայքայվում են: Իսկ ահա ազոտով հարուստ Կատամին-ԱԲ14 հավելանյութի պարունակության ազդեցությունը շփման գործակցի վրա հանգեցնում է անընդհատ նվազմանը՝ ազոտի հակակոռոզիոն հատկության շնորհիվ: Եռէթանոլամինի (ԵԷԱ) պարունակության ազդեցությունը օլեինաթթվի արտադրական թափոններում գնահատելու համար հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ԵԷԱ-ն կիրառվել է որպես թանձրացուցիչ: Նկ. 4, ե-ից երևում է, որ ԵԷԱ-ի մինչև 2 % պարունակությունը շփման գործակցի վրա գործնականում ազդեցություն չի ունենում, իսկ դրա խտության հետագա աճը նորից հանգեցնում է շփման գործակցի նվազմանը ԵԷԱ-ի հակակոռոզիոն ազդեցության և թթվայնության փոքրացման պատճառով:

Մաշման օրինաչափությունները լիակատար արտացոլող հաշվարկային կախումների ու բանաձևերի արտածումը, հաշվի առնելով մաշման պրոցեսի վրա ազդող բազմապիսի գործոնները, չափազանց դժվար խնդիր է և դեռևս գտնվում է իր լուծման փուլում: Ուստի ավելի հաճախ կիրառվում են փորձնական եղանակով ստացված կախումներ, որոնք սակայն արտահայտում են այս կամ այն փաստացի

մաշման տեսակը, շփման հանգույցն ու կիրառվող նյութերը, շահագործման պայմաններն ու ռեժիմները և այլն [7]:



Նկ. 4. Հավելանյութերի C պարունակության ազդեցությունը քսուրայուղային կոմպոզիտների շփման f գործակցի վրա տարբեր բեռնվածքների դեպքում.

ա) $\text{Ի-40Ա} + \text{ԴՔԲ}$, բ) $\text{Ի-40Ա} + \text{ԴՔԷ}$, գ) $\text{Ի-40Ա} + \text{ԴՔԿ}$, դ) $\text{Ի-40Ա} + \text{Կ-ԱԲ14}$, ե) $\text{ՕԱԹ} + \text{ԵԷԱ}$.

Տարբեր դասի օրգանական միացություններից հավելանյութերի հակամաշվածքային և հակաքերծվածքային հատկությունների փորձարարական հետազոտությունները բացահայտում են յուրաքանչյուր դասի հավելանյութերի ազդեցության մեխանիզմի՝ յուրահատկությունները և հաստատում են մեկ ընդհանուր օրինաչափություն՝ հավելանյութերի օպտիմալ ընտրությունը կարող է ապահովել քսուքայուղային նյութերի բարձր՝ հակամաշվածքային և հակաքերծվածքային հատկություններ: Դժվար չէ ենթադրել, որ մաշման և կերամաշման գործընթացների հիմքում ընկած են որոշ ընդհանուր երևույթներ, ուստի բնական է քսուքայուղային նյութերի հակամաշվածքային և հակաքերծվածքային հատկությունների միջև նաև ընդհանուր կոռելյացիայի առկայությունը [7]:

Նման կոռելյացիա քսուքայուղերի հակաքերծվածքային հատկությունները բնութագրող $(P_{\text{կր}} - P)/P$ պայմանական պարամետրի և մաշման ուժգնության գործակցի հակադարձ մեծության $(1/)$ միջև հաստատվել է էմպիրիկ կախման տեսքով [6]: Բազմաթիվ փորձերի հիման վրա (մոտ 400 չափում) տարբեր քսուքայուղերի ու հավելանյութերի համակցության, սահքի արագությունների և շփահամակարգի կոշտության պայմաններում, նման կախման համար առաջարկվել է երկրորդ աստիճանի կորի տեսքով հետևյալ արտահայտությունը՝

$$\frac{P_{\text{կր}} - P}{P} = a \cdot \left(\frac{1}{\alpha}\right)^2 + b \cdot \left(\frac{1}{\alpha}\right) - c: \quad (5)$$


a -ն, b -ն և c -ն գործակիցներ են, որոնք, փորձերի քանակից կախված, ունեն աղյուսակում բերված արժեքները:

Աղյուսակ

a, b և c գործակիցների արժեքները՝ կախված փորձերի քանակից

№	Փորձերի քանակը	a	b	c
1	150	-7.85(10 ⁻⁶)	9.36(10 ⁻³)	-4.44(10 ⁻²)
2	400	-8.56(10 ⁻⁶)	9.1(10 ⁻³)	-6.2(10 ⁻²)
3	700	-8(10 ⁻⁶)	9(10 ⁻³)	-1.5(10 ⁻²)

Քսուքայուղային կոմպոզիտների շփագիտական հատկությունների փորձարարական հետազոտությունները հնարավորություն են տալիս ճշգրտել (5) արտահայտության a, b և c գործակիցների արժեքները՝ հավելանյութերի փորձարկման շրջանակների ընդլայնման միջոցով փորձերի քանակի ավելացման շնորհիվ (շուրջ 700 չափում): Այդ դեպքում $(P_{\text{կր}} - P)/P$ պայմանական պարամետրի և մաշման ուժգնության գործակցի $1/(\alpha)$ հակադարձ մեծության միջև էմպիրիկ կախումն ունի նկ. 5-ում պատկերված տեսքը:



Նկ. 5. Փորձարկվող քսուքայուղային նյութերի հարաբերական մաշակայունության պարաբոլային կոռելյացիան

Ստացված արտահայտությունը (5) հնարավորություն է տալիս՝

- ա) գնահատել փորձարկվող քսուքայուղային նյութի հարաբերական մաշակայունությունն (գործակցի արժեքի չափով,
- բ) մաշման (ուժգնության արժեքի հիման վրա փոքրաքանակ փորձերի միջոցով կանխատեսել քսուքայուղային նյութերի հակաքերծվածքային հատկությունները և որոշել քսուքայուղի կրիտիկական P_{un} բեռնվածության արժեքը:

Այսպիսով, կատարված հետազոտությունները հնարավորություն են տալիս շահագործման տարբեր ռեժիմների համար ընտրել հավելանյութերի տեսակն ու այն օպտիմալ չափաբաժինը, ինչը կապահովի մեքենաների և մեխանիզմների շփահանգույցներում կիրառվող յուղերի բարձր շփագիտական բնութագրեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պողոսյան Ա.Կ.** Շփագիտության հիմունքներ. -Երևան: Լույս - Աթենք, 1994-95, -296 էջ:
2. Основы трибологии (трение, износ, смазка) / Под общ. ред. **А.В. Чичинадзе.** - М.: Машиностроение, 2001. - 664 с.
3. **Боуден Ф. П., Тейбор Д.** Трение и смазка. -М.: Машгиз, 1960. -151 с.
4. Смазочные материалы. Антифрикционные и противоизносные свойства, методы испытаний: Справочник / Под ред. **Р.М. Матвеевского, В.Л. Лашхи, И.А. Буяновского** и др. -М.: Машиностроение, 1989. -224 с.
5. **Дерягин Б. В., Чураев Н. В., Муллер В. М.** Поверхностные силы. -М.: Наука, 1985. - 399 с.
6. **Арустамян Ю.С., Погосян А.К., Сароян В.В., Геворкян Г.Р.** Исследование различных классов химических органических соединений в качестве присадок // Трение и износ. - 2000. - №3 (21). – С. 318-322.

7. Pogosian A. K., Arustamian Yu. S., Gevorkian G. R. Prediction method of anti-scoring properties of lubricants // Wear. -Oxford, England, 1993. -167. -P. 85-86.

ՀՊՃՀ(Պ). Նյութը ներկայացվել է խմբագրություն 14.09.2009:

А.К. ПОГОСЯН, В.В. САРОЯН, К.Р. БОНИАТЯН

О ЗАКОНОМЕРНОСТЯХ И ОСОБЕННОСТЯХ ТРЕНИЯ ПРИ ГРАНИЧНОЙ СМАЗКЕ

Изучено изменение трибологических свойств в зависимости от содержания различных составов присадок в смазочных материалах. Уточнена характеризующая антизадирные свойства смазочных материалов корреляционная зависимость между условной нагрузкой и коэффициентом интенсивности изнашивания, что дает возможность малочисленным опытом прогнозировать противоизносные свойства смазочных материалов.

Ключевые слова: трибология, граничная смазка, присадка, смазка, адсорбция, заедание.

A.K. POGOSIAN, W.V. SAROYAN, C.R. BONIATIAN

ABOUT RELATIONSHIPS AND PECULIARITIES OF BOUNDARY LUBRICATION FRICTION

Tribological characteristics dependence upon the content of various additives in lubricants has been studied. The fixed correlation between lubricant anti-scoring properties characterizing conditional loading and wear intensity coefficient which gives possibility for forecasting lubricant anti-wear properties has been corrected.

Keywords: tribology, boundary lubrication, additives, lubricant, adsorption, seizure.

Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ, Գ.Գ. ՄԻՐԱՔՅԱՆ, Է. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

**ԼԻՍԵՆՆԵՐԻ ԿՈՌՈԶԻՈՆ ՀՈԳՆԱԾԱՅԻՆ ԿՈՐԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԸ
ՑԻԿԼԱՅԻՆ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՐՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՍԲ**

Ցույց է տրված, որ ջրում լիսենների զանգվածային կոռոզիոն հոգնածային փորձարկումների դեպքում ցիկլային երկարակեցությունների փոփոխականային շարքերի ցրվածքները հոգնածային քայքայման ադսորբցիոն ($N \leq N_{Gk}$) և էլեկտրաքիմիական $N > N_{Gk}$ բայց նույն գոտում արժեքները գործնականորեն անփոփոխ են ցիկլային գերլարումների մակարդակներից: Ցրվածքների համասեռության “զրոյական” վարկածը համալիր կարգով ստուգված է Հարթլեի, Կոչրենի և Բարթլետի չափանիշներով, որի արդյունքով առաջարկվում է նշված գոտիներում ճշտել կոռոզիոն հոգնածային կորերի հավասարումները՝ քվանտիլային հոգնածային գծերի զուգահեռ դասավորման սկզբունքով:

Առանցքային բառեր. կոռոզիոն հոգնածային փորձարկումներ, ցիկլային երկարակեցություն, ցրվածքային վերլուծություն, հոգնածային կորի հավասարում, քվանտիլային գծերի ընտանիք:

Կոռոզիոն միջավայրերում աշխատող սարքավորման աշխատանքային պայմաններն էապես են տարբերվում փակ շինություններում տեղադրված մեքենաների աշխատանքային ռեժիմներից: Առաջին դեպքում, կախված միջավայրի ներգործման առանձնահատկությունից (խոնավություն, կոռոզիոն և ագրեսիվ հեղուկների և գազերի առկայություն, pH -ցուցանիշ, կաթիլային, պարբերական, անընդհատ կամ հոծ կոռոզիոն միջավայր և այլն), պատասխանատու և ծանրաբեռնված մեքենամասերի և հանգույցների աշխատանքային մակերևույթներում ընթացող հոգնածային քայքայման մեխանիզմները տարբերվում են երկրորդ դեպքից, բայց առաջինի համար, անկախ գերլարումների մակարդակից, ընդհանրական է հոգնածային քայքայման անընդհատ բնույթը: Այդ պատճառով կոռոզիոն հոգնածային կորն անընդհատ վայրընթաց բնույթի է, իսկ դա ենթադրում է ամրության և երկարակեցության հաշվարկների զուգահեռ և պարտադիր կատարում: Մեխանիկական համակարգերի մետաղատարության նվազարկումը, որը ժամանակի պահանջն է, պարտադրում է նշված հաշվարկների ոչ միայն միջնարժեքային, այլ նաև հավանական գնահատումը, հետևաբար և կոռոզիոն հոգնածային գործընթացում ցիկլային երկարակեցությունների ցրման օրինաչափությունների հաշվառումը: Դա հնարավոր է իրականացնել, եթե ճշտվեն կոռոզիոն հոգնածային քվանտիլային գծերի ընտանիքների հավասարումները, որոնք փաստորեն այդ երևույթը նկարագրող մաթեմատիկամիջակազրական մոդելներն են:

Կոռոզիոն հոգնածային քայքայման դեպքերի ողջ տարրապատկերից դիտարկվում է մաքուր ջրի ներգործմամբ աշխատող մեքենամասերի և հանգույցների հոգնածային դիմադրության խնդիրը, որը մյուսների նկատմամբ

առավել լայն է տարածված և համապատասխանում է բաց մթնոլորտային և պարբերաբար ջրվող պայմաններում աշխատող սարքավորման և տրանսպորտային միջոցների մեծ մասի իրական շահագործական ռեժիմներին:

Զգալի թվով կատարված հետազոտություններով բացահայտված և մանրամասն հետազոտված է կոռոզիոն հոգնածային քայքայման մեխանիզմը, որը փաստորեն “մետաղ-հեղուկ” սահմանային շերտում իրար հետ միաժամանակ ընթացող և “մրցակցող” երևույթների՝ աղտորեցիոն (մակակլանում) և էլեկտրաքիմիական գործընթացների արդյունքն է:

Բարձր գերլարումների գոտում ($\sigma_i \geq \sigma_{Gk}$) դրանցից գերակշռում է աղտորեցիոն, իսկ ցածր գերլարումների գոտում ($\sigma_i < \sigma_{Gk}$)՝ էլեկտրաքիմիական գործընթացների ազդեցությունը: Նշված ազդեցությունները տարաբնույթ են և կախված են մի շարք առանձին կամ համատեղ գործոնների առկայությունից (նյութի քիմիական բաղադրությունը, միջավայրի ներգործման բնույթը, pH -ցուցանիշի արժեքը, բեռնավորման ռեժիմը, մեքենամասի կոնստրուկտորական և տեխնոլոգիական առանձնահատկությունները և այլն): Հանրագումարային արդյունքով դրանք ձևավորում են մեքենամասի կոռոզիոն հոգնածային դիմադրության ցուցանիշների միջնարժեքային մեծությունները, ցրման բնույթը և չափերը:

Հաշվի առնելով կոռոզիոն բազմացիկային հոգնածության լայն տիրույթում ($N = 10^5 \dots 10^8 \text{ ghly}$) հոգնածային փորձարկումների արդյունքների բաշխումը և ցրման դաշտերի դասավորությունը, կոռոզիոն հոգնածային կորերը ($\lg \sigma, \lg N$) կոորդինատային համակարգում մեծամասամբ ներկայացվում են երկձյուղ քվանտիլային գծերի ընտանիքների տեսքով [1-3], որոնց բեկման կետը $N_{Gk} = 1 \dots 5 \cdot 10^6$ ցիկլերի միջակայքում է.

ձախ ճյուղը ($N < N_{Gk}$)՝

$$\lg N = (\overline{\lg N_k} + z_p s_{Nrk}) - (\overline{m_k} + z_p s_{mk})(\lg \sigma - \overline{\lg \sigma_k}) = C_k - m_k \lg \sigma, \quad (1)$$

աջ ճյուղը ($N \geq N_{Gk}$)՝

$$\lg N = (\overline{\lg N'_k} + z_p s'_{Nrk}) - (\overline{m'_k} + z_p s'_{mk})(\lg \sigma - \overline{\lg \sigma'_k}) = C'_k - m'_k \lg \sigma, \quad (2)$$

իսկ բեկման կետի կոորդինատները որոշվում են հետևյալ կերպ՝

$$\lg \sigma_{Rk} = (C_k - C'_k) / (m_k - m'_k), \quad \lg N_{Gk} = (C_k / m_k - C'_k / m'_k) / (1/m_k - 1/m'_k): \quad (3)$$


Զանգվածային կոռոզիոն հոգնածային փորձարկումների տվյալների ուսումնասիրումը և նախնական վիճակագրական մշակումները [4] մատնացույց են անում երկու կարևոր հանգամանք.

ա) $N \leq N_{Gk}$ և $N > N_{Gk}$ միջակայքերում $\lg N_i$ -ի ցրման ցուցանիշները գործնականում ինվարիանտ (անփոփոխ) են σ ցիկլային գերլարումներից և, անկախ դրանց մակարդակներից, յուրաքանչյուր միջակայքում նկատվում են $\lg N_i$ -ի ցրման դաշտերի մոտավորապես հավասար չափեր,

բ) աղտորեցիոն և էլեկտրաքիմիական գործընթացները, որոնց ֆիզիկաքիմիական բացահայտումները և ազդման բնույթն էապես են տարբերվում հոգնածային քայքայման մեխանիզմի վրա ազդող այլ գործոններից (մասշտաբային երևույթ, լարումների կուտակում, բեռնվածքի ռեժիմ և այլն), գերակայող դեր են կատարում այդ մեխանիզմում և փոփոխում քայքայման ընթացքը, որի արդյունքով

երկարակեցությունների նշված միջակայքերում ստեղծում են հաստատուն ցրվածքներով $\lg N_i$ - ի դաշտեր: Ցրվածքի չափերը ձևավորող հիմնական գործոն է դառնում կոռոզիոն միջավայրի ազդման տևողությունը, որի պատճառով $N > N_{Gk}$ միջակայքում, ի տարբերություն $N \leq N_{Gk}$ - ի, $\lg N_i$ - ի, ցրման դաշտերը լայնանում են:

Ցիկլային երկարակեցությունների ցրման ցուցանիշների փոփոխման օրինաչափությունների ուսումնասիրումը և քանակական գնահատումը կարևոր նշանակություն ունեն կոռոզիոն միջավայրերում աշխատող մեխանիկական համակարգերի ծառայության հավաստի ժամկետներ նշանակելու և անխափան աշխատանքի հավանականության մակարդակը որոշելու հաշվարկային ընթացակարգերում: Այդ նկատառումներից ելնելով՝ դիտարկված են զանգվածային կոռոզիոն հոգնածային փորձարկումների արդյունքները (փորձարկումներ մաքուր ջրի ներգործմամբ, *պողպատ* 45 մակնիշի հարթ փորձանմուշներ, $d = 12$ մմ, լարումների 8 մակարդակներ՝ $\sigma_i = 100 \dots 300$ ՄՊա միջակայքում, յուրաքանչյուր մակարդակի վրա փորձարկված է 20 փորձանմուշ, բեռնվածության ռեժիմը՝ համատեղ պտտական ծոում և ոլորում՝ σ_i - ի բոլոր մակարդակներում $\tau/\sigma = 0,6$ հաստատուն հարաբերությամբ [1]): Նշված փորձարկումները նմանակել են կոռոզիոն միջավայրերում աշխատող մեքենաների լիսեռների իրական աշխատանքային ռեժիմները: Փորձարկումների արդյունքները ներկայացված են նկարում, իսկ նախնական հաշվարկները՝ աղ. 1-ում:



Նկ. Ցիկլային երկարակեցությունների ցրման դաշտերը

Կատարված է $\lg N_i$ ցիկլային երկարակեցությունների փոփոխական շարքերի համալիր վիճակագրական հետազոտություն՝ այդ շարքերի ցրվածքների հավասարության “զրոյական” վարկածի ստուգում ըստ Հարթլեի, Կոչրենի և Բարթլետի չափանիշների [5].

Աղյուսակ 1

Կոռոզիոն հոգնածային փորձարկումների արդյունքները [1]

N	n_i	σ_i , $U\eta\omega$	$\overline{\lg N_i}$	$s_{\lg N_i}^2$	$s_{\lg N_i}$	$V_{\lg N_i}$, %
1	20	100	7,62999	0,02326	0,15252	2,00
2		120	7,14378	0,02305	0,15183	2,13
3		140	6,67452	0,02118	0,14553	2,18
4		160	6,48854	0,02112	0,14532	2,24
5		200	6,09360	0,01654	0,12860	2,11
6		230	5,96219	0,01636	0,12790	2,15
7		270	5,67445	0,01752	0,13235	2,33
8		300	5,55921	0,01606	0,12674	2,28

$$F_{\max} = \frac{s_{\max}^2}{s_{\min}^2} \leq F_{\max \alpha}, \quad (4)$$

$$G_{\max} = \frac{s_{\max}^2}{\sum_{i=1}^m s_i^2} \leq G_{\max \alpha}, \quad (5)$$

$$\chi^2 = \frac{2,3026}{c} \left[\left(\sum_{i=1}^m n_i - m \right) \lg s^2 - \sum_{i=1}^m (n_i - 1) \lg s_i^2 \right] \leq \chi_{\alpha}^2, \quad (6)$$

որտեղ

$$c = 1 + \frac{1}{3(m-1)} \left(\sum_{i=1}^m (n_i - 1)^{-1} - \left(\sum_{i=1}^m n_i - m \right)^{-1} \right), \quad s^2 = \sum_{i=1}^m (n_i - 1) s_i^2 / \left(\sum_{i=1}^m n_i - m \right),$$

իսկ $F_{\max \alpha}$, $G_{\max \alpha}$, χ_{α}^2 – ն համապատասխանաբար, Հարթլեի, Կոչրենի և Բարթլետի չափանիշների կրիտիկական արժեքներն են m թվով փոփոխական շարքերի, $k = n_i - 1$ “ազատության աստիճանների” թվի և $\alpha = 0,05$ հուսալիության ելքի մակարդակի համար[5]:

Ցրվածքային վերլուծությանը վերաբերող վիճակագրական հաշվարկներ կատարելու համար կիրառված է [6]-ում ներկայացված համակարգչային ծրագիրը (C++ 45 կբ):

$\lg N_i$ -ի ցրման դաշտերի դասավորությունից և չափերից (նկար) բխում է չափանիշային ստուգումների իրականացման երկու հաշվարկային սխեմաների անհրաժեշտությունը.

ա) σ_i ցիկլային գերլարումների բոլոր 8 մակարդակներով,

բ) ըստ σ_i -ի երկու առանձին խմբերի՝ $\sigma_{il} = 100, 120, 140, 160$ *ՄՊա* և $\sigma_{ill} = 200, 230, 270, 300$ *ՄՊա*, որոնք համապատասխանում են կոռոզիոն հոգնածային քայքայման երկու գործընթացներին (ադսորբցիոն և էլեկտրաքիմիական) $N \leq N_{Gk}$ և $N > N_{Gk}$ միջակայքերում, ուր $\lg N_i$ - ի ցրվածքներն իրարից էապես չեն տարբերվում (աղ.1):

Կատարված համալիր վիճակագրական ստուգումները (աղ. 2) հաստատում են $s_{\lg N}^2$ - ի հավասարության “զրոյական” վարկածը ինչպես σ_i -ի 8 մակարդակներով, այնպես էլ σ_i -ի առանձնացրած խմբերի տարբերակներով՝ $\alpha = 0,05$ արժեքի դեպքում: Երկրորդ դեպքում հուսալիության ելքի մակարդակը հասնում է մինչև $\alpha = 0,010 \dots 0,025$, ինչը վկայում է նման մոտեցման առավել բարձր հավաստիության մասին, այսինքն՝ ա) հաշվարկային սխեման կարելի է օգտագործել մոտավոր հաշվարկներում և որոնողական հետազոտություններում, բ) սխեման՝ ճշգրիտ հաշվարկներում՝ հավաստի ծառայության ժամկետներ նշանակելիս:

Ցրվածքների հավասարության վարկածը թույլ է տալիս խմբավորել ցրվածքները և դրանք ներկայացնել ընդհանրացված արժեքով (աղ. 2)՝

$$s_{\lg k}^2 = \sum_{i=1}^m (n_i - 1) s_{\lg N_{ki}}^2 / (\sum_{i=1}^m n_i - m): \quad (7)$$

Ստացված արդյունքների կարևոր հետևությունը կոռոզիոն հոգնածային քայքայման յուրաքանչյուր միջակայքում ($N_i \leq N_{Gk}, N_i > N_{Gk}$), առանձին վերցրած՝ հոգնածության քվանտիլային զծերի զուգահեռ դասավորությունն է միջնագծայինի նկատմամբ, ինչպես նաև այդ միջակայքերում $\lg N_i$ - ի ցրման դաշտերի տարբեր լայնությունները:

Աղյուսակ 2

Փորձարարական տվյալների ցրվածքային վերլուծության արդյունքները

N	Ցիկլային գերլարումների մակարդակները, <i>ՄՊա</i>	n_i	m	Ստուգումներն ըստ չափանիշների						$s^2_{\lg Nk}$
				Հարթելի		Կոչրենի		Բարթոլետի		
				$F_{\max}$	$F_{\max \alpha}$	$G_{\max}$	$G_{\max \alpha}$	χ^2	χ^2_{α}	
1	100...300	2	8	1,448	4,32	0,150	0,239	1,660	2,170	0,01939
2	100...160		4	1,097	3,38	0,263	0,423	0,081	0,352	0,02215
3	200...300	0		1,091		0,264		0,034		0,01662

Սա նշանակում է, որ ճշգրտման են ենթակա նախկինում ընդունված (1)-(3) մաթեմատիկական մոդելները: Քանի որ կոռոզիոն հոգնածային քվանտիլային զծի ցուցիչը ($m_k = \overline{m_k} + Z_p S_{mk}, \quad m'_k = \overline{m'_k} + Z_p S'_{mk}$) բնութագրում է $\lg N_i$ - ի ցրվածքների փոփոխականությունն ըստ σ_i - ի մակարդակների և որպես հետևանք՝ $\lg N_i$ - ի ցրման դաշտերի լայնացումը (զծային օրենքով) σ_i - ի արժեքների նվազման դեպքում, համալիր վիճակագրական հետազոտման արդյունքների հիմքով կարելի է

ուղղումներ մտցնել (1)-(3) -ում՝ ընդունելով $s_{mk}, s'_{mk} \approx 0$: Հաշվի առնելով, որ $N_i \leq N_{Gk}$, $N_i > N_{Gk}$ միջակայքերում $s_{lg N_k}^2$ և $s_{lg N'_k}^2$ ընդհանրացված ցրվածքների արժեքները տարբեր են (աղ. 2), տարբեր կլինեն նաև ցրման դաշտերի չափերը, որոնք ստացվում են (1)-(3)-ում ընդգրկված տվյալները բաշխման կենտրոններ $(\lg \sigma_k, \lg N_k)$ և $(\lg \sigma'_k, \lg N'_k)$ բերված անհատական ցրման գործակիցներով՝

$$s_{Nrk} = s_{lg N_k} \sqrt{(1-r_k^2)(n_k-1)/(n_k-2)}, s'_{Nrk} = s'_{lg N_k} \sqrt{(1-r_k'^2)(n'_k-1)/(n'_k-2)} : \quad (8)$$

Վերջնական տեսքով (1), (2) հավասարումները կարելի է գրել՝

$$\lg N = (\lg N_k + z_p s_{Nrk}) - m_k (\lg \sigma - \lg \sigma_k) = C_k - m_k \lg \sigma, \quad (9)$$

$$\lg N = (\lg N'_k + z_p s'_{Nrk}) - m'_k (\lg \sigma - \lg \sigma'_k) = C'_k - m'_k \lg \sigma : \quad (10)$$

Մոտավոր հաշվարկներ կատարելիս կարելի է ընդունել՝ $s_{lg N_k} = s'_{lg N_k}$, որը որոշված է σ_i -ի 8 մակարդակներն իրար հետ դիտարկելիս և որը տեղադրվում է (8)-ում՝ s_{Nrk}, s'_{Nrk} արժեքները հաշվելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Стакян М.Г., Манукян Г.А.** Об уравнении кривой коррозионной усталости конструкционных материалов // ФХММ. -1990. -Т. 26, N5.- С. 57-60.
2. **Стакян М.Г., Манукян Г.А.** Об одном методе расчетной оценки сопротивления коррозионной усталости валов // Изв. вузов. Машиностр.- 1990. - N 4. - С. 11-16.
3. **Ստակյան Մ.Գ., Մարգարյան Ա.Գ., Միրաքյան Գ.Գ.** Կոռոզիոն հոգնածային դիմադրության գնահատման հաշվեգրաֆիկական մեթոդ // ՀՃԱԼ.-2005.-Հ.2, N 3.- էջ 377-383:
4. **Стакян М.Г., Миракян Г.Г.** Дисперсионный анализ результатов испытаний валов на коррозионную усталость // Сб. мат. Междунар. науч.-практ. конф. "Транспорт-логистика 2008", г. Ереван, 16-18 мая, 2008г.- Ереван: Антарес, 2008. -С. 123-129.
5. **Степнов М.М., Шаврин А.В.** Статистические методы обработки результатов механических испытаний: Справочник -М: Машиностр., 2005. - 400 с.
6. **Стакян Ю.М., Маргарян Э.А.** Дисперсионный анализ результатов биомедицинских измерений // Вестник-76 ПИУА(П): Сб. научн.-мет. ст.-Ереван, 2009.-Т.1, N1.-С. 315-319.

ՀՊՀՀ (Պ). Նյութը ներկայացվել է խմբագրություն 02.12.2009:

М.Г. СТАКЯН, Г.Г. МИРАКЯН, Э.А. МАРГАРЯН

УРАВНЕНИЯ КРИВЫХ КОРРОЗИОННОЙ УСТАЛОСТИ ВАЛОВ С УЧЕТОМ ДИСПЕРСИОННОГО АНАЛИЗА ЦИКЛИЧЕСКИХ ДОЛГОВЕЧНОСТЕЙ

Показано, что при массовых испытаниях валов на коррозионную усталость в воде дисперсии вариационных рядов циклических долговечностей в адсорбционной ($N \leq N_{Gk}$) и электрохимической ($N > N_{Gk}$) зонах усталостные разрушения разные, но внутри каждой из этих зон они практически инвариантны к уровням циклических перенапряжений. “Нулевая” гипотеза однородности дисперсий комплексно проверена по критериям Хартлея, Кочрена и Бартлета. В результате предложено в указанных зонах уточнить уравнения кривых коррозионной усталости по принципу параллельного расположения квантильных линий усталости.

Ключевые слова: испытания на коррозионную усталость, циклическая долговечность, дисперсионный анализ, уравнение кривой усталости, семейство квантильных линий.

M.G. STAKYAN, G.G. MIRAKYAN, E.A. MARGARYAN

EQUATIONS OF CORROSION SHAFT FATIGUE CURVES SUBJECT TO DISPERSION ANALYSIS OF FATIGUE CRACK LIFE

It is shown that during mass shaft tests for corrosion fatigue in water of variational series of fatigue crack life in adsorptive ($N \leq N_{Gk}$) and electrochemical ($N > N_{Gk}$) zones the fatigue failures are different but inside each zone they are invariant to levels of cyclic overstress. “Null” hypothesis of dispersion homogeneity is fully checked by Hartley, Cochren and Bartlet criteria. As a result, equations of corrosion fatigue curves on principle of parallel quantile fatigue line disposition were suggested to refine in those zones.

Keywords: corrosion fatigue tests, fatigue crack life, dispersion analysis, equation fatigue curve, family of quantile lines.

M.V. BELUBEKYAN, Ju.G. SANOYAN, M.G. SARGSYAN

STRESS DEFORMED STATE OF PIEZOELASTIC PLATE UNDER CROSSCUT ELECTRIC FIELD

The equations of generalized plane tense condition and bending of piezoactive elastic plate made of material of class 6mm polarized in the thickness are gained on the basis of Kirchhoff hypothesis. The analogy is defined between the problems of thermoelastic and piezoactive plates in the case when the temperature field and the electric field strength broadside directed on the preface of the plate are assigned. Tense deformed state of the bending plate about a fastened edge of a plate is investigated.

Keywords: piezoelectric, elastic plate, thermoelastic, bend, analogy.

1. It is assumed that the plate in the rectangular Cartesian coordinate systems (x,y,z) occupies the field $0 < x \leq a$, $0 \leq y \leq a$, $-h \leq z \leq h$. The plate is made of elastic piezoactive materials of class 6mm and polarized on the coordinate z. The equations of piezoelastic material are given in the articles [1], [2] and have the following form:

$$\sigma_{11} = C_{11}\varepsilon_{11} + C_{12}\varepsilon_{22} + C_{13}\varepsilon_{33} - e_{31}E_3, \sigma_{22} = C_{12}\varepsilon_{11} + C_{11}\varepsilon_{22} + C_{13}\varepsilon_{33} - e_{31}E_3, \quad (1.1)$$

$$\sigma_{33} = C_{13}\varepsilon_{11} + C_{13}\varepsilon_{22} + C_{33}\varepsilon_{33} - e_{33}E_3,$$

$$\sigma_{12} = 1/2(C_{11} - C_{12})\varepsilon_{12}, \sigma_{23} = C_{44}\varepsilon_{23} - e_{15}E_2, \sigma_{31} = C_{44}\varepsilon_{31} - e_{15}E_1, \quad (1.2)$$

$$D_1 = \varepsilon_4 E_1 + e_{15}\varepsilon_{13}, D_2 = \varepsilon_1 E_2 + e_{15}\varepsilon_{23}, D_3 = \varepsilon_3 E_3 + e_{31}(\varepsilon_{11} + \varepsilon_{22}) + e_{33}\varepsilon_{33}. \quad (1.3)$$

In order to make analogy with thermo elastic problems of plate theories it is convenient to express deformation through tension. Thus it follows from equation (1.1):

$$\varepsilon_{11} = \frac{1}{E}\sigma_{11} - \frac{\nu}{E}\sigma_{22} - \frac{\nu'}{E'}\sigma_{33} + \alpha_e E_3, \varepsilon_{22} = -\frac{\nu}{E}\sigma_{11} + \frac{1}{E}\sigma_{22} - \frac{\nu'}{E'}\sigma_{33} + \alpha_e E_3, \quad (1.4)$$

$$\varepsilon_{33} = -\frac{\nu'}{E'}\sigma_{11} - \frac{\nu'}{E'}\sigma_{22} - \frac{1}{E'}\sigma_{33} + \beta_e E_3.$$

In case (1.4) the following symbols are accepted:

$$E = (C_{11} - C_{12}) \left(1 + \frac{C_{12}C_{33} - C_{13}^2}{C_{11}C_{33} - C_{13}^2} \right), \nu = \frac{C_{12}C_{33} - C_{13}^2}{C_{11}C_{33} - C_{13}^2},$$

$$E' = \frac{(C_{11} + C_{12})C_{33} - 2C_{13}^2}{C_{11} + C_{12}}, \nu' = \frac{C_{13}}{C_{11} + C_{12}},$$

$$\alpha_e = \frac{1-\nu}{E}e_{31} - \frac{\nu'}{E'}e_{33}, \beta_e = \frac{1}{E'}(e_{33} - 2\nu'e_{31}).$$

From (1.2) and (1.3) it goes the following:

$$\varepsilon_{12} = \frac{2}{C_{11} - C_{12}}\sigma_{12}, \varepsilon_{23} = \frac{1}{C_{44}}(\sigma_{23} + e_{15}E_2), \varepsilon_{31} = \frac{1}{C_{44}}(\sigma_{31} + e_{15}E_1), \quad (1.5)$$

$$\begin{aligned} D_1 &= \varepsilon_1(1+\lambda)E_1 + \frac{e_{15}}{C_{44}}\sigma_{31}, D_2 = \varepsilon_1(1+\lambda)E_2 + \frac{e_{15}}{C_{44}}\sigma_{32}, \\ D_3 &= \varepsilon'_3 E_3 + \alpha_e(\sigma_{11} + \sigma_{22}) + \beta_e \sigma_{33}, \end{aligned} \quad (1.6)$$

where

$$\lambda = \frac{e_{15}^2}{\varepsilon_1 C_{44}}, \quad \varepsilon'_3 = \varepsilon_3 + 2 \frac{1-\nu}{E} e_{31}^2 - \frac{4\nu'}{E'} e_{31} e_{33}.$$

The above listed forms of substance equations are convenient for problem solving of plate bending [3]. In accordance with Kirchhoff theory of plates the tension of σ_{33} is ignored and $\sigma_{31} = \sigma_{32} = 0$ accepted in correlations (1.4), (1.5), (1.6). New correlations will have the following form:

$$\begin{aligned} \varepsilon_{11} &= \frac{1}{E}\sigma_{11} - \frac{\nu}{E}\sigma_{22} + \alpha_e E_3, \quad \varepsilon_{22} = -\frac{\nu}{E}\sigma_{11} + \frac{1}{E}\sigma_{22} + \alpha_e E_3, \\ \varepsilon_{33} &= -\frac{\nu'}{E'}\sigma_{11} - \frac{\nu'}{E'}\sigma_{22} + \beta_e E_e, \\ \varepsilon_{12} &= \frac{2}{C_{11}-C_{12}}\sigma_{12}, \quad \varepsilon_{23} = \frac{e_{15}}{C_{44}}E_2, \quad \varepsilon_{31} = \frac{e_{15}}{C_{44}}E_1, \\ D_1 &= \varepsilon_1(1+\lambda)E_1, \quad D_2 = \varepsilon_1(1+\lambda)E_2, \quad D_3 = \varepsilon'_3 E_3 + \alpha_e(\sigma_{11} + \sigma_{22}). \end{aligned}$$

Averaged equations of equilibrium have the following form [3]:

$$\frac{\partial T_1}{\partial x} + \frac{\partial S}{\partial y} = 0, \quad \frac{\partial S'}{\partial x} + \frac{\partial T_2}{\partial y} = 0, \quad (1.7)$$

$$\frac{\partial M_1}{\partial x} + \frac{\partial H}{\partial y} - N_1 = 0, \quad \frac{\partial H}{\partial x} + \frac{\partial M_2}{\partial y} - N_2 = 0, \quad \frac{\partial N_1}{\partial x} + \frac{\partial N_2}{\partial y} = 0, \quad (1.8)$$

where

$$\begin{aligned} T_k &= \int_{-h}^h \sigma_{kk} dz, \quad S = \int_{-h}^h \sigma_{12} dz, \quad k=1,2, \\ M_k &= \int_{-h}^h z \sigma_{kk} dz, \quad H = \int_{-h}^h z \sigma_{12} dz, \quad N_k = \int_{-h}^h \sigma_{k3} dz. \end{aligned} \quad (1.9)$$

Defining the main tensions from (1.4) and using the links

$$\varepsilon_{ij} = \frac{1}{2} \left(\frac{\partial u_i}{\partial x_j} + \frac{\partial u_j}{\partial x_i} \right)$$

and substituting into (1.9), (1.4) we will define forces and moments which will have the following form:

$$T_1 = C \left(\frac{\partial u}{\partial x} + \nu \frac{\partial v}{\partial y} - Q_e \right), \quad S = \frac{1-\nu}{2} C \left(\frac{\partial v}{\partial x} + \frac{\partial u}{\partial y} \right), \quad T_2 = C \left(\frac{\partial v}{\partial y} + \nu \frac{\partial u}{\partial x} - Q_e \right), \quad (1.10)$$

$$M_1 = -D \left(\frac{\partial^2 w}{\partial x^2} + \nu \frac{\partial^2 w}{\partial y^2} + R_e \right), \quad H = -(1-\nu) D \frac{\partial^2 w}{\partial y \partial x}, \quad M_2 = -D \left(\frac{\partial^2 w}{\partial y^2} + \nu \frac{\partial^2 w}{\partial x^2} + R_e \right). \quad (1.11)$$

In formulas (1.10), (1.11) longitudinal and flexural rigidity is accepted in the following form:

$$C = \frac{2Eh}{1-\nu^2}, \quad D = \frac{2Eh^3}{3(1-\nu^2)}.$$

Q_e, R_e are the volumetric forces and moments caused by the electric field

$$Q_e = \frac{1+\nu}{2h} \alpha_e \int_{-h}^h E_3 dz, \quad R_e = \frac{3(1+\nu)}{2h^3} \alpha_e \int_{-h}^h z E_3 dz.$$

Substitution (1.10) into (1.7) gives the equations of generalized plane tense state of the plate in the displacements.

$$\frac{\partial^2 u}{\partial x^2} + \frac{1+\nu}{2} \frac{\partial^2 v}{\partial x \partial y} + \frac{1-\nu}{2} \frac{\partial^2 u}{\partial y^2} - \frac{\partial Q_e}{\partial x} = 0, \quad \frac{\partial^2 v}{\partial y^2} + \frac{1+\nu}{2} \frac{\partial^2 u}{\partial x \partial y} + \frac{1-\nu}{2} \frac{\partial^2 v}{\partial x^2} - \frac{\partial Q_e}{\partial y} = 0.$$

Equations of plate bending problem corresponding to equations (1.8), (1.11) have the following form:

$$\frac{\partial N_1}{\partial x} + \frac{\partial N_2}{\partial y} = 0, \quad D \frac{\partial}{\partial x} (\Delta w + R_e) + N_1 = 0, \quad D \frac{\partial}{\partial y} (\Delta w + R_e) + N_2 = 0. \quad (1.12)$$

The second and third equations in the system (1.12) define forces N_1, N_2 . Excluding N_1 and N_2 from (1.12) we get the formula which defines deflection of a plate

$$\Delta^2 w + \Delta R_e = 0. \quad (1.13)$$

The correlations and equations listed herein have the same forms as the corresponding expressions of problems of thermo elastic plates [4]. Hence the problem of thermo elastic plates is got if force Q_e and moment R_e are replaced by Q_t and R_t

$$Q_t = \frac{(1+\nu)}{2h} \alpha_t \int_{-h}^h T dz, \quad R_t = \frac{3(1+\nu)}{2h^3} \alpha_t \int_{-h}^h z T dz. \quad (1.14)$$

In the formula (1.14) the function $T=T(x,y,z)$ defines thermo field, where α_t is the coefficient of heat expansion. Hence if the temperature field is known $T=T(x,y,z)$ and the electric field strength broadside are directed to the preface of the plate $E_3(x,y,z)$, then the problem of thermo elastic and piezoelectric plates are solved through the same equations and boundary conditions.

2. If one of the sides of rectangular plate is much bigger than the other ($a \gg b$), it is ordinary to assume that the conditions of fastened edge $x=a$ will not influence the tense deformed condition of piezoelectric plate about $x=0$. Taking into consideration this circumstance Nadai reviewed the problems of bending of the plate-line under the influence of uniform distributed load. It is assumed that when removing from the edge of a plate the function of plate bending approximates to the function of bending by cylinder surface. That is function of bending does not depend on coordinates x . Solving of Nadai's problem is given in monograph [6].

Let us assume that piezoactive (or thermo elastic) plate occupies the field of $0 \leq x < \infty, 0 \leq y \leq b, -h \leq z \leq h$. It is assumed that the edges of plate $y=0, b$ are hingedly supported

$$w=0, \quad M_y=0$$

or

$$w = 0, \quad \partial^2 w / \partial y^2 + R_i = 0. \quad (2.1)$$

If we assume that the form of bending surface of plate does not depend on coordinate x then solving of equation (1.13), satisfying conditions (2.1) will have the view

$$w_0 = 0.5y(b-y). \quad (2.2)$$

Following Nadai's idea for semi-infinite strip under consideration the following requirement is set

$$\lim_{x \rightarrow 0} w(x, y) = w_0(x, y).$$

Problem solving (1.13) is introduced in the form

$$w = F(x, y) + w_0(x, y).$$

According to (1.13), (2.1) and (2.2) function F should satisfy the equation

$$\Delta^2 F = 0 \quad (2.3)$$

and boundary conditions

$$F = 0, \partial^2 F / \partial y^2 = 0, y = 0, b \quad (2.4)$$

and

$$\lim_{x \rightarrow 0} F = 0. \quad (2.5)$$

Solving of equation (2.3) satisfying boundary conditions (2.4) is presented in the form

$$F = \sum_{n=0}^{\infty} f_n(x) \sin \lambda_n y, \lambda_n = \pi n / b. \quad (2.6)$$

Substitution of (2.6) into (2.3) derives the equation of the fourth order relative to $f_n(x)$, general solving of which satisfying condition (2.5) has the form:

$$f_n(x) = C_1 e^{-\lambda_n x} + C_2 x e^{-\lambda_n x}.$$

Final solving of equation (1.13) satisfying boundary conditions (2.1) and conditionally (2.2) will be:

$$w = \sum_{n=0}^{\infty} (C_1 + C_2) e^{-\lambda_n x} \sin \lambda_n y + 0.5 R_i y(b-y). \quad (2.7)$$

3. Let the edge of a plate $x=0$ is fastened hard (clumped):

